ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/5

ք. Երևան <<19>> ապրիլի 2017թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտե ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյա նի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Դոմ-Դենիել>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Քալանթարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը .

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին ,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցի ն համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասի ն անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիր ատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմ անված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողությ ան ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հա նձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման -ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման -ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման -ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները : Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հա յտը նախագծած ներկայա - ցուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման -ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման -ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման -ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծա ծ ներկայա ցուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2 -րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմա նված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահման ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման - ընդունման արձանա գրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 14969400 (տասնչորս միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ -ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման -ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմ աց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12. 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատ արողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագր ին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով [1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա , սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումա ների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկ ոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտա վորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գն ումը կատարելու համար

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14 -րդ հոդվածի 7 -րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կ կնքվի համաձայնագիր:*

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետությա ն օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայ նագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կ արգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա ռելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծ անուցման մասին» ՀՀ օրենքի 10 -րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Դոմ-Դենիլ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 1
h/h 900013220026	h/h՝ 220001921794000
ՀՀ ՖՆ գործադիր մարմնի վարչություն	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ՝ 00077257
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն՝
Վ. Հասրությա՛ն	Ա. Քալանթարյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

Ծրագրային ապահովման մշակման ծառայությունները իր մեջ ներառում են հետևյալ գործառույթները.

- Ապահովել եռաշերտ (3 Tire) տեխնիկական աջակցում ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների կենտրոններում գործող ծառայությունների համար
  - **Tire 1 support level**. Provide SCC production with monitoring and initial troubleshooting and incident handling on the 24/7 basis. This should include the performance and availability monitoring of all production hardware and software infrastructure components including:
  - **1-ին շերտի աջակցման մակարդակ** . Ապահովել ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեիհամակարգերի մոնիտորինգը, առաջացած խնդիրների հետազոտումը և միջադեպերի կառավարում 24/7 ռեժիմով: Այն պետք է ներառի գործող բոլորհամակարգերի և ենթակառուցվածքային կոմպոնենտների արտադրողականության և հասանելիության մոնիթորինգը (սարքա վորումների և ծրագրային ապահովման), ներառյալ՝
    - Սարքավորումային կոմպոնենտներ . Ինտերնետ միացումներ (internetlinks), ցանցային փոխարկիչներ (networkswitches), ցանցային երթուղիչներ (networkrouters), ցանցային հրապատներ (networkfirewalls), ծանրաբեռնվածության հավասարա կշռիչներ (loadbalancers), BladeCenter, SAN և NAS պահոցներ (SAN and NAS storages), FC փոխարկիչներ (FC switches), ժապավենայինկրիչներ (tapedevices) և այլ ակտիվ կոմպոնենտներ
    - Ծրագրային կոմպոնենտներ . Հրապատային ծառայություններ (firewallservices), VPN ծառայությունն եր (VPN services), DNS սերվերներ (DNS servers), AD ծառայություններ (AD services), SAN պահոցի կառավարում (SAN storagemanagement), պահոցի կրկնապատճենում (storagereplications), FC ենթակառուցվացքներ, NFS և Samba սերվերներ (NFS andSambaservers), վիրտուալ միջավայրի հիմնական և վիրտուալ օպերացիոն համակարգեր (virtualenvironmenthostsandguestoperatingsystems).
  - **2-րդ շերտի աջակցման մակարդակ** . Ապահովել ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգերի ադմինիստրավորման ծառայությունները 24/7 ռեժիմով , ներառյալ՝ առօրյա տեղա դրումներ , թարմացումներ , ադմինիստրավորում , սպասարկում , միջադեպերի կառավարում, խնդիրների լուծում, փոփոխությունների կատարում, հզորությունների բաշխում, պահուստավորում և վերականգնում, համակարգի ծրագրային և սարքավորումային կոմպոնենտների ենթակառուցվածքի թարմացում , ներառյալ՝
    - Սարքավորումային կոմպոնենտներ . Ինտերնետ միացումներ (internet links), ցանցային փոխարկիչներ (network switches), ցանցային

երթուղիչներ (network routers), ցանցային հրապատներ (network firewalls), ծանրաբեռնվածության հավասարակշռիչներ (load balancers), blade centers, SAN և NAS պահոցներ (SAN and NAS storages), FC փոխարկիչներ (FC switches), ժապավենային կրիչներ (tape devices) և այլ ակտիվ կոմպոնենտներ

- Ծրագրային կոմպոնենտներ . Հրապատային ծառայություններ (firewallservices), VPN ծառայություններ (VPN services), DNS ս երվերներ (DNS servers), AD ծառայություններ (AD services), SAN պահոցի կառավարում (SAN storagemanagement), պահոցիկրկնապատճենում (storagereplications), FC ենթակառուցվացքներ, NFS և Sambaսերվերներ (NFS andSambaservers), վիրտուալ միջավայրի հիմնական և վիրտուալօպերացիոն համակարգեր (virtualenvironmenthostsandguestoperatingsystems).

- **3-րդ շերտի աջակցման մակարդակ** . Ապահովել ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգերիինժեներա - տեխնիկական ծառայությունները 8/5 ռեժիմով սերտ համագործակցելով ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՏՏ կառավարման և ծրագրավորման խմբերի հետ հետևյալ ուղղություններով . Ենթակառուցվացքի նախագծում, տարողունակության պլանավորում, համակարգի ինտեգրում, հասանելիության ապահովում և արտադրողականությանբարելավում: Տրամադրել անսարքությունների շտկման խորա ցված մակարդակ գործող ենթակառուցվածքների կրիտիկական արտահոսքերի և խոշոր միջադեպերի դեպքում, լոկալիզացնելով հնարավոր լուծումը 1 օրացուցային օրում
- **Blade centers**
- IBM blade systems ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- **SAN Infrastructure systems and services**
- IBM Storage systems, Brocade FC switches, ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- **Network Infrastructure systems and services**
- CISCO երթուղիչներ(routers), հրապատներ (firewalls), փոխարկիչներ (switches) ն երառյալ դրանց ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (staticanddynamicrouting, firewall, VPN, VLAN և այլ առանձնահատկություններ).
- JUNIPER փոխարկիչներ (switches) ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (VLAN, spanningtree, aggregation և այլ առանձնահատկություններ).
- Alteonand BNT ծանրաբեռնվածության հավասարակշռիչներ (loadbalancers) և փոխարկիչներ (switches) ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (routing, loadbalancingapplication, accesslists և այլ առանձ նահատկություններ)
- Activedirectory ծառայություններ ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (domains, accounts, sites, trusts)

- DNS ծառայություններ ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (zones, forward ing, failover և այլ առանձնահատկություններ)
- DHCP ծառայություններ ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում (scopes, relays, balancing և այլ առանձնահատկություններ)
- Samba, NFS and FTP ծառայություններ ներառյալ դրանց տեղադրում, ադմինիս տրավորում, սպասարկում և օժանդակում (shares, accesslists, availability և այլ առանձնահատկություններ)
- Օպերացիոն համակարգեր
- Operatingsystems
- Windows Server 2008 R2, Windows Server 2010 ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- Linuxսե ՐվերներRedHat և Debian ընտանիքի ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- Վիրտուալսերվերային միջավայրեր
- VMW և ESX համակարգեր ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- Hyper-V համակարգեր ներառյալ դրանց տեղ ադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- Պահուստավորման համակարգեր և ծառայություններ
- Ժապավենային սարքավորումներ ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում
- Veeam պահուստավորման ծրագրային ապահովում ներառյալ դրանց տեղադրում, ադմինիստրավորում, սպասարկում և օժանդակում

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիր կնքելու օրից	25.12.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Դոմ-Դենիլ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 1
h/h՝ 220001921794000
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00077257
Տնօրեն՝

Ա. Քալանթարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2

N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/5 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2993.88	4490.82	5987.76	7484.7	8981.64	10478.58	11975.52	13472.46	14969.4	14969.4

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով :*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Դոմ-Դենիլ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 1
հ/հ՝ 220001921794000
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00077257
Տնօրեն՝

Ա. Քալանթարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/5 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/5 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն